

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ
ՅՈՒՅՄՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՅՈՒՄԸ
ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ**

Հոդվածում քննարկվում է համագործակցության վարույթում համագործակցող մեղադրյալի անվտանգության ապահովման և մյուս հանցակիցների դեմ տրվող ցուցմունքների արժանահավատության ապահովման շահերի զուգակցման հարցերը: Հեղինակը նշում է, որ համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքի դատական դեպոնացումը կարող է հանդիսանալ ինչպես համագործակցող մեղադրյալի անվտանգության, այնպես էլ հանցակիցների դեմ տրվող ցուցմունքների արժանահավատության ապահովման կառուցակարգ:

Հիմնաբառեր - մեղադրյալ, համագործակցություն, ցուցմունք, դատական դեպոնացում, անվտանգություն:

Առանձին տեսակի հանցագործությունների բացահայտումը և մեղքի ապացուցումը բարդ գործընթաց է: Խոսքը վերաբերում է հատկապես հանցակցությանը կատարված այն հանցագործությունների քննությանը, երբ հանցակիցներից մեկը համագործակցության համաձայնագիր է կնքում իրավապահ մարմինների հետ (համագործակցող մեղադրյալ), բացահայտում մյուս հանցակիցներին (դատավարական հակառակորդ), տրամադրում տեղեկությունները: Իրավապահ մարմինների հետ համագործակցությունը դառնում է ոչ ցանկալի, եթե դրա արդյունքում վտանգվում է համագործակցող մեղադրյալի կյանքը կամ առողջությունը:

Իրավապահ մարմինների հետ համագործակցությունը խթանելու նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվել է համագործակցության վարույթը, որը կիրառվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու անխուսափելիությունը ապահովելու նպատակով: Համագործակցության վարույթը օգտագործվում է կազմակերպված հանցավորության տարբեր դրսևորումների, ահաբեկչության, մասնավորապես՝ բարդ, բազմաէպիզոդ, տևական բնույթ կրող կոռուպցիոն հանցագործությունների, թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառության, մարդկանց առևտրի և նմանատիպ այլ հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև՝ առանձնապես ծանր և բարդ քննություն ենթադրող այլ արարքների վերաբերյալ գործերով: Համագործակցության վարույթի նպատակն է ապահովել այն հանցագործությունների բացահայ-

տումը և դրանց վերաբերյալ գործերով արդյունավետ քրեական հետապնդումը, որոնց մասին ցանկացած տեղեկատվություն փակ է արտաքին աշխարհի համար և փաստի ուժով գտնվում է հենց հանցավորների բացառիկ իմացության ներքո¹:

Համագործակցության վարույթը կարելի է նախաձեռնել միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն (այսուհետ՝ համագործակցության միջնորդություն) ներկայացնելու դեպքում: Համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի տվյալ անձին ներկայացված մեղադրանքին առնչվող հանցագործությանը, որը քննվում է նույն կամ մեկ այլ վարույթով (Նախագծի 460-րդ հոդված):

Համագործակցության վարույթի շրջանակում մեղադրյալը պարտավորվում է կատարել գործողություններ, որոնք նպատակ ունեն բացահայտել իրեն ներկայացված մեղադրանքին առնչվող հանցակցի կատարած առերևույթ հանցագործությունը կամ աջակցել ապահովելու կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունը: Գործնականում հաճախ մեղադրյալի համագործակցությունն առաջացնում է մյուս հանցակիցների հակազդեցությունը: Համագործակցության վարույթում բախվում են նաև համագործակցող մեղադրյալի անվտանգության ապահովման և մյուս հանցակիցների դեմ տրվող ցուցմունքների արժանահավատության ապահովման շահերը:

Համագործակցող մեղադրյալի անվտանգու-

քյան ապահովման շահը: Նախագծով նախատեսված իրավական կարգավորումներից բխում է, որ մեղադրյալի՝ համագործակցության վերաբերյալ պարտականությունների պատշաճ կատարումը ենթադրում է ոչ միայն նախաքննության, այլև դատաքննության ընթացքում հանցակիցների մերկացում: Համագործակցող մեղադրյալը նախաքննության ընթացքում հանցակցի արարքների վերաբերյալ տալիս է ցուցմունքներ, մասնակցում առերեսումներին, իսկ դատաքննության ընթացքում հրապարակային հաստատում նախաքննական ցուցմունքները: Ընդ որում, Նախագծով նախատեսված են համագործակցող մեղադրյալի կողմից նաև դատարանում հանցակիցների դեմ ցուցմունքներ տալու պարտականությունը ապահովելու որոշակի երաշխիքներ: Այսպես, Նախագծի 464-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համագործակցության համաձայնագիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համագործակցության վարույթի ընթացքում քննիչի միջնորդությամբ հսկող դատախազն իրավասու է կասեցնել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը, եթե դա անհրաժեշտ է համաձայնագրով նրա ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար: Այս դրույթից բխում է, որ համագործակցող մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատվում է, իսկ նրա կողմից պարտականությունների պատշաճ կատարումը կարող է ենթադրել հիմնական վարույթով հանցակիցների դեմ դատական լուծումների ընթացքում ցուցմունքներ տալը: Միայն դատարանում ցուցմունք տալուց հետո կարող է համագործակցող մեղադրյալի նկատմամբ կասեցված քրեական հետապնդումը վերսկսվել:

Մինչդատական և դատական վարույթների ընթացքում համագործակցող մեղադրյալի՝ նույնաբովանդակ վարության հանդեպ գործողություններին մասնակցելը նրա կյանքի և առողջության համար ստեղծում է կրկնակի վտանգի (սպառնալի) վիճակ: Որքան նրա կյանքին և առողջությունը վտանգ է սպառնում մինչդատական վարույթի ընթացքում (ցուցմունք տալիս, առերեսման մասնակցելիս, ճանաչման ներկայացնելիս և այլն), այնուհետև՝ դատարանում նույնաբովանդակ (նույնաբնույթ) գործողություններին մասնակցելիս:

Համագործակցող մեղադրյալի՝ հանցակիցների վերաբերյալ տված ցուցմունքների արժանահավատության ապահովման շահը: Համագործակցող մեղադրյալի ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս պետք է հաշվի առնել երկու հանգամանք. համագործակցող մեղադրյալի՝ ճիշտ

ցուցմունք տալու պարտականության առկայությունը և համագործակցող մեղադրյալի մեղավորությունը մյուս հանցակցին վերագրելու ռիսկը:

1. Համագործակցող մեղադրյալի՝ ճիշտ ցուցմունք տալու պարտականությունը: Եվրոպական դատարանն անդրադարձել է համագործակցող մեղադրյալի խոստովանական ցուցմունքները մյուս մեղադրյալների (հանցակիցների) մասով որպես մեղադրական ապացույց օգտագործելու թույլատրելիությանը: «Վ. Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործի վերաբերյալ (24.06.2008թ.) Եվրոպական դատարանը նշել է, որ այլ մեղադրյալների ցուցմունքների գնահատումը պահանջում է առավել ուշադիր մոտեցում, քանի որ ցուցմունք տվող հանցակիցների կարգավիճակը տարբերվում է վկաների կարգավիճակից: Նրանք չեն զգուշացվում ճիշտ ցուցմունքներ տալու պարտականության մասին, նրանց ցուցմունքների արժանահավատությունը որևէ կերպ երաշխավորված չէ, ուստի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների պահպանման տեսանկյունից հանցակիցների խոստովանական ցուցմունքները կարող են օգտագործվել միայն մեղքն ընդունող մեղադրյալի դատապարտման համար, և այն ինքնին չի կարող համարվել մյուս մեղադրյալի մեղավորության մասին վկայող ապացույց:

2. Համագործակցող մեղադրյալի մեղավորությունը մյուս հանցակցին վերագրելու ռիսկը: «Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով (14.01.2010թ.) Ս.-ն իրեն մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում և ցուցմունք տվել, որ դիմողը գողության հանցակից է՝ մանրամասն նկարագրելով գողության ժամանակ իր և դիմողի ունեցած դերակատարությունը: Եվրոպական դատարանը նշել է, որ հանցակցության դեպքում առկա է հանցակիցների՝ միմյանց դեմ տրված ցուցմունքների ոչ արժանահավատ լինելու ռիսկ, քանի որ նրանց շահերից բխում է մեղավորությունը վերագրել մյուս հանցակցին: Ուստի նման ապացույցների գնահատման դեպքում պետք է առկա լինի առավել բարձր վերահսկողություն:

Գործնականում ծագում է վերը նշված երկու շահերի զուգակցելու անհրաժեշտություն: Համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքի դատական դեպոնացումը կարող է հանդիսանալ ինչպես համագործակցող մեղադրյալի անվտանգության, այնպես էլ հանցակիցների դեմ տրվող ցուցմունքների արժանահավատության ապահովման կառուցակարգ: Տեսության մեջ նշվում է, որ մեղադրյալի ցուցմունքի դեպոնացման անհրաժեշտություն կարող է առաջանալ խմբի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կողմից կատարված հանցագործության դեպքում, երբ մեղադրյալներից մեկի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում²:

Համագործակցող մեղադրյալի ցուցմունքը դեպքում ստանալու պայմաններում համագործակցող մեղադրյալը համագործակցության վարույթի շրջանակներում ստանձնած պարտականությունների կատարման նպատակով նախաքննության ժամանակ դատավորի ներկայությամբ հանցակիցների վերաբերյալ տալիս է ցուցմունք՝ ազատվելով դատարանում նույնաբովանդակ և ռիսկային գործողություններին մասնակցելու պարտականությունից, իսկ դատավարական հակառակորդը (հանցակիցը), օգտվելով հակընդդեմ հարցման իրավունքից, կարող է վիճարկել համագործակցող մեղադրյալի ցուցմունքների արժանահավատությունը:

Նախագծով նախատեսված չէ համագործակցող մեղադրյալի անվտանգության ապահովման համար նրա ցուցմունքը դատական կարգով դեպքում առանձին հիմք: Նախագծի 312-րդ հոդվածի 2-րդ հիմքը (հնարավորություն չի ունենա մասնակցելու դատաքննությանը) նպատակային մեկնաբանելու պարագայում այն կարող է կիրառվել նաև համագործակցող մեղադրյալի ցուցմունքը դեպքում ստանալու պայմաններում: Այսպես, կոնկրետ վարույթով համագործակցող մեղադրյալի կյանքին և առողջությանն ակնհայտորեն սպառնացող իրական վտանգը պետք է դիտել որպես համագործակցող մեղադրյալի՝ դատաքննությանը մասնակցելու անհնարիություն: Բանն այն է, որ համագործակցող մեղադրյալի կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգը փաստացի գրկում է նրան հանցակիցների գործով հիմնական դատախազներին մասնակցելու հարցում ընտրություն կատարելու հնարավորությունից կամ խիստ դժվարացնում է այն: Ընդ որում «անհնարին» բառը բացատրական բառարաններում մեկնաբանվում է որպես անկարելի, խիստ դժվարին³:

Անհրաժեշտ է վերլուծել նաև համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքը դեպքում ստանալու ընթացքում նրա անվտանգության ապահովման հարցը: Բանն այն է, որ նախաքննության ընթացքում համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպքում ստանալու հանցակցի մասնակցությունը ինքնին համագործակցող մեղադրյալի կյանքի և առողջության համար կարող է ստեղծել սպառնալից իրավիճակ: Առաջարկվում է քննարկել նման սպառնալիքները չեզոքացնելու կամ վտանգը մեղմելու տարբերակները:

Նախ, եթե հանցակիցները համագործակցող մեղադրյալի նկատմամբ կիրառել են արգելված մի-

ջոցներ (սպառնալիք, ֆիզիկական կամ գույքային վնաս հասցնել և այլն) և նրա մոտ առաջացրել իրական վախի զգացողություն, ապա համագործակցող մեղադրյալի հանցակիցները իրենց իսկ հակաիրավական գործողություններով հրաժարվում են դեպքում ստանալու մասնակցելու և հակընդդեմ հարցման իրավունքներից: Այս մոտեցումն ամրագրված է «Ալ-Քավայն և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորությունների» գործով Եվրոպական դատարանի (15.12.2011թ.) վճռի 123-րդ կետում, որի համաձայն՝ եթե վկայի վախը պայմանավորված է մեղադրյալի կամ նրա անունից գործող անձանց հակաիրավական գործողություններով, ապա թույլատրելի է վկայի ցուցմունքները դատարանում հրապարակել առանց վկայի կողմից կենդանի ցուցմունք տալու կամ ամբաստանյալի, նրա ներկայացուցիչների կողմից քննվելու անհրաժեշտության, եթե նույնիսկ վկայի ցուցմունքը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ և որոշիչ վկայությունն է: Մեղադրյալի կողմից վկաների մեջ առաջացրած վախից օգտվելու հանգամանքն անհամատեղելի է տուժողի և վկաների իրավունքների հետ: Ոչ մի դատարան չպետք է թույլատրի, որ նման կերպ խաթարվի դատաքննության արդարությունը: Հետևաբար, մեղադրյալի նման վարքագիծը պետք է դիտարկել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ վկային հարցաքննելու իրավունքից հրաժարվել: Նշված դիրքորոշումը կիրառելի է, եթե վկայի նկատմամբ սպառնալիքները կամ գործողությունները կատարում են մեղադրյալի անունից կամ նրա իմացությամբ և հավանությամբ գործող անձինք:

Ցուցմունքի դեպքում ստանալու ընթացքում համագործակցող մեղադրյալի կյանքը և առողջությունը վնասելու հնարավորությունը նվազեցնելու, միաժամանակ հանցակիցների հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելու համար առաջարկում ենք քննարկել ցուցմունքի դեպքում ստանալու տեսակապի միջոցով իրականացնելու հարցը⁴: Նման դեպքում ցուցմունքը դեպքում ստանալու դատական նիստերի դահլիճում գտնվում են քննիչը, դատավորը, համագործակցող մեղադրյալը, պաշտպանը, իսկ հանցակիցը և նրա պաշտպանը՝ հարակից սենյակում: Հակընդդեմ հարցման իրավունքն իրականացնելու նպատակով նրանք տեսակապի միջոցով հետևում են հարցաքննությանը, իսկ հարցերը ներկայացնում են քննիչի միջոցով:

Նման կարգով համագործակցող մեղադրյալի դեպքում ստանալու նախաքննական ցուցմունքի թույլատրելիությունն ապահովելու և այն դատարանում հրապարակելու համար պետք է պահպանել Եվրո-

պական դատարանի մշակած հետևյալ չափանիշները՝

1. *համագործակցող մեղադրյալի դատավարական հակառակորդի (հանցակցի) հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, տեղեկությունների տրամադրում:*

2. *համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը նրա դատավարական հակառակորդի (հանցակցի) պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովում:*

3. *համագործակցող մեղադրյալին ճիշտ ցուցմունք տալու պարտականության և սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության մասին նախազգուշացում:*

4. *համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքի տեսազրույց:*

5. *համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացման նկատմամբ դատական երաշխիքի կիրառում:*

1. Համագործակցող մեղադրյալի դատավարական հակառակորդի (հանցակցի) հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, տեղեկությունների տրամադրում: «Կորնելիս ընդդեմ Նիդերլանդների» գործով Եվրոպական դատարանը (05.05.2004թ., N 994/03) անդրադարձել է իրավապահ մարմինների հետ համագործակցող անձանց հետ դատախազության կողմից քրեական հետապնդումից անձեռնմխելիությամբ օժտելու և այդ անձանց ցուցմունքների թույլատրելիության հարցին: Նշված գործով Ջ.-ն իշխանություններին հայտնել էր, որ Կորնելիսը ներգրավված է կոկաինի ապօրինի շրջանառության մեջ, որի հիման վրա իշխանությունները դիմողին մեղադրանք են առաջադրել թմրադեղերի ապօրինի շրջանառությանը մասնակցելու համար: Հետագայում Ջ.-ն դատախազության հետ կնքել է համաձայնություն այն մասին, որ Կորնելիսի վերաբերյալ իրականությանը համապատասխանող ցուցմունքներ տալու դիմաց նա մասնակի կազատվի քրեական պատասխանատվությունից: Դատարանը դիմողին մեղավոր է ճանաչել թմրադեղերի ապօրինի շրջանառության մեջ և դատապարտել 6 տարի ազատազրկման: Դիմողը բողոքարկել է դատավճիռը և միջնորդել, որ իրեն տրամադրեն Ջ.-ի վերաբերյալ հարուցված քրեական վարույթի բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ դատախազության և Ջ.-ի միջև ձեռք բերված համաձայնագրերը: Վերաքննիչ դատարանը փոփոխել է առաջին առյուծի դատարանի դատավճիռը՝ դիմողին դատապարտելով ազատազրկման՝ 9 տարի ժամկետով: Եվրո-

պական դատարանը նշել է, որ Կորնելիսի 6-րդ հոդվածի 1-ին մասը պետական մեղադրողներին պարտավորեցնում է բացահայտել մեղադրյալի մեղավորության վերաբերյալ բոլոր ապացույցները, սակայն տվյալ գործով դիմողի պահանջած փաստաթղթերը էական ապացույցներ չեն համարվել, իսկ դիմողը վերաքննիչ դատարանում բավարար հնարավորություն ունեցել է՝ ուսումնասիրելու դատախազության և Ջ.-ի միջև համաձայնության օրինականությունը, ուստի վերաքննիչ դատարանի կողմից փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը մերժելու մասով բողոքը ակնհայտ անհիմն է: Համագործակցող անձանց ցուցմունքների օգտագործումն առնչվում է արդար դատաքննության իրավունքի հետ, սակայն այս գործով դիմողը և դատարանները տեղյակ են եղել նման համաձայնության մասին և Ջ.-ի ցուցմունքների արժանահավատությունը գնահատելու համար նրան ենթարկել են բազմակողմանի հարցաքննության: Ուստի Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ չի կարելի պնդել, որ դիմողը դատապարտվել է այնպիսի ցուցմունքների հիման վրա, որոնց պատճառով զրկված է եղել պաշտպանության իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Նախագծով կարգավորված է դեպոնացմանը մասնակցող դատավարական հակառակորդի հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի տրամադրման հարցը: Նախագծի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ցուցմունքը դեպոնացնելու միջնորդությանը կցվում են այն նյութերը, որոնք դեպոնացման մասնակիցներին հնարավորություն կտան պատշաճորեն իրականացնել հակընդդեմ հարցման իրավունքը, իսկ 314-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ցուցմունքի դեպոնացման պարագայում դեպոնացման օրը որոշելիս դատարանը հաշվի է առնում վարույթի մասնակիցների կողմից հակընդդեմ հարցում կատարելուն նախապատրաստվելու համար անհրաժեշտ ժամանակը: Միջնորդություն ներկայացրած անձը պարտավոր է միջնորդությանը կցել բոլոր այն նյութերը (ցուցմունքներ, ապացուցողական գործողության արձանագրություններ և այլն), որոնք անաչառ դիտորդի տեսանկյունից անհրաժեշտ են հակընդդեմ հարցման իրավունքը պատշաճ իրականացնելու համար: Քննիչը կրում է նշված պարտականությունը բարեխիղճ կատարելու պատասխանատվությունը: Եթե հիմնական դատախազության ընթացքում պարզվի, որ ցուցմունքը դեպոնացնելու մասին միջնորդություն ներկայացրած անձը դեպոնացման ժամանակ տիրապետել է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի, սակայն դրանք չի կցել միջնորդությանը, ապա դատավարական հակառակորդը (հանցակիցը) հիմնական դատախազների ընթացքում կարող է վիճարկել դեպոնացված ցուցմունքի պատշաճությունը և հակընդդեմ հարցման իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով պահանջել դատարանում կրկին հարցաքննել համագործակցող մեղադրյալին: Այսպես, «Սյուսարևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» (09.11.2006թ.) գործի դիմողը նշել է, որ նախաքննության ընթացքում կատարված առերեսման ժամանակ նրան հասանելի չեն եղել քրեական գործի մի շարք նյութեր, մասնավորապես՝ ճանաչման ներկայացնելու արձանագրությունը, ուստի հնարավորություն չի ունեցել վկաներին ներկայացնել համապատասխան հարցեր: Եվրոպական դատարանն այս կետով խախտում չի արձանագրել միայն այն պատճառաբանությամբ, որ թեև նշված նյութերը դիմողի համար մատչելի չեն եղել, սակայն դիմողն առերեսման ժամանակ ճանաչման ներկայացնելու վերաբերյալ վկաներին հարցեր ուղղել է:

2. *Համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը նրա դատավարական հակառակորդի (հանցակիցի) պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովում:* Համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացմանը հանցակիցների պաշտպանի մասնակցությունը նրանց հակընդդեմ հարցման իրավունքի պատշաճ իրականացման պայման է: Եվրոպական դատարանը «Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» (14.01.2010թ.) գործով նշել է, որ ներպետական դատարանները Ս.-ի նախաքննական ցուցմունքները գնահատելիս սահմանափակվել են միայն այն փաստով, որ նախաքննության ընթացքում դիմողները հնարավորություն ունեցել են առերեսման ժամանակ հարցաքննել Ս.-ին: Եվրոպական դատարանը չի համաձայնել նշված դիրքորոշմանը՝ նշելով, որ առերեսման ժամանակ դիմողները չեն օգտվել պաշտպանի ծառայություններից, քանի որ տեղեկացված չեն եղել այդ մասին: Բացի այդ, մեղադրյալները նախաքննության ընթացքում հաճախ հայտնվում են առավել խոցելի վիճակում, քանի որ քրեադատավարական օրենսդրության զարգացումը միտում ունի առավել բարդացնել հատկապես ապացույցների հավաքման և գնահատման գործընթացը: Նման պայմաններում մեղադրյալների խոցելի վիճակը կարող է փոխհատուցվել պաշտպանի օգնությամբ: Հետևապես հիմքեր չկան պնդելու, որ իրավական օգնության բացակայության պայմաններում դիմողը կարող էր գիտակցել

առերեսման ընթացակարգը և արդյունավետ կերպով օգտվել հակընդդեմ հարցման իրավունքից:

Նախագծով կարգավորված է համագործակցող մեղադրյալի ցուցմունքը դեպոնացնելիս մյուս մեղադրյալների (հանցակիցների) պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի (տվյալ պարագայում՝ հանցակիցի) հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա դատարանը կայացրել է տվյալ մեղադրյալին (տվյալ պարագայում՝ հանցակիցին) առնչվող ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում:

3. *Համագործակցող մեղադրյալին ճիշտ ցուցմունք տալու պարտականության և սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության մասին նախազգուշացում:* Եվրոպական դատարանը «Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով անդրադարձել է հանցակիցի՝ մյուս մեղադրյալների դեմ տրված նախաքննական ցուցմունքները դատարանում հրապարակելու և օգտագործելու իրավաչափությանը: Նշված գործով վկա Ս.-ն իրեն մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում և ցուցմունք տվել, որ դիմողը հանդիսացել է գողության հանցակից՝ մանրամասն նկարագրելով իր և գողության ժամանակ դիմողի ունեցած դերակատարությունը: Եվրոպական դատարանը նշել է, որ հանցակցության դեպքում առկա է ռիսկ, որ հանցակիցների՝ միմյանց դեմ տրված ցուցմունքները կարող են լինել ոչ արժանահավատ, քանի որ նրանց շահերից բխում է մեղավորությունը վերագրելը մյուս հանցակցին: Ուստի, նման ապացույցների գնահատման դեպքում պետք է առկա լինի առավել բարձր վերահսկողություն, քանի որ ցուցմունք տալիս հանցակիցների կարգավիճակն էապես տարբերվում է սովորական վկաների կարգավիճակից: Նրանք ցուցմունք տալիս չեն նախազգուշացվում սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության մասին:

Գրականության մեջ առկա է մոտեցում այն մասին, որ անջատված վարույթով համագործակցության համաձայնագիր կնքած դատապարտյալը մյուս հանցակիցների վերաբերյալ հիմնական վարույթով վկա է, ում պետք է զգուշացնել ցուցմունք տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու, սուտ մատուցման համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին է: Նախագծով նախատեսվել է մեղադրյալի կողմից ճիշտ

ցուցմունք տալու պարտականության մասին դրույթ: Նախագծի 228-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախագծուցացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

4. *Համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքի տեսագրում:* Յուցմունքի դեպոնացման ընթացքի տեսագրումը (ձայնագրումը) հնարավորություն է տալիս դատավորին հիմնական դատախազների ընթացքում անմիջականորեն դիտարկել (ունկնդրել) համագործակցող մեղադրյալի վարքագիծը (ցուցմունքները): «Սլյուսարեն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով Եվրոպական դատարանը նշել է. «Թեև վկաները դատարանում անմիջապես ցուցմունք չեն տվել, սակայն նախաքննության ընթացքում վկաների, դիմողի և նրա պաշտպանի մասնակցությամբ կատարված առերեսումը բավարարել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի որ վկաներին ներկայացված հարցերը և դրանց պատասխանները ձայնագրվել են»:

Եվրոպական դատարանը «Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով կայացված որոշման 76-րդ և 78-րդ կետում նշել է, որ տվյալ գործով Ս.-ն նախաքննության մարմիններին տվել է ցուցմունք, որին դիմողները և նրանց պաշտպանները չեն մասնակցել: Գործի նյութերում բացակայում է ցուցմունքների տեսագրումը, որը հնարավորություն կտար դատարանին և դիմողներին դիտարկել Ս.-ի վարքագիծը և դրա հիման վրա ձևավորել ցուցմունքների արժանահավատության վերաբերյալ սեփական դիրքորոշումը:

Նախագծով ցուցմունքի դեպոնացման ընթացքը տեսաձայնագրելու խնդիրը կարգավորված է միայն ձայնագրման մասով: Այսպես, Նախագծի 315-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված է, որ ցուցմունքի դեպոնացման արդյունքում օրենսգրքի վերաբերելի պահանջների պահպանմամբ կազմվում է ցուցմունքի դեպոնացման արձանագրություն, որին կցվում է դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը: Յուցմունքի դեպոնացման արձանագրությունը ստորագրում են դեպոնացման մասնակիցները, իսկ նախագահող դատավորն այն հաստատում է իր կնիքով: Յուցմունքի դեպոնացման դատական նիստի ձայնային արձանագրության հիման վրա քննիչը կազմում և ստորագրում է դեպոնացված ցուցմունքի վերձանման արձանագրությունը: Նշված դրույթում նախա-

տեսված է միայն ցուցմունքը դեպոնացնելու ընթացքի ձայնագրումը, մինչդեռ Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ պետք է առկա լինի տեսագրում, որից հստակ տեսանելի կլինի համագործակցող անձի վարքագիծը: Նշված պայմանը պահպանելու նպատակով քննիչը կարող է ցուցմունքը դեպոնացնելիս դեկավարվել Նախագծի 221-րդ հոդվածով, որը հնարավորություն է տալիս քննչական գործողության ընթացքն ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կատարել ձայնագրում, տեսագրում:

5. *Համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացման նկատմամբ դատական երաշխիքի կիրառում:* «Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով Եվրոպական դատարանը նշել է նաև, որ առերեսումն իրականացվել է քննիչի կողմից, ով չէր բավարարում անկախության և անաչառության պահանջներին և առերեսման ժամանակ օժտված էր ցանկացած հարց հանելու լայն հայեցողությամբ: Նախագծով նշված չափանիշը ապահովված է: Այսպես, համագործակցող մեղադրյալի ցուցմունքի դեպոնացումն իրականացվում է դատական երաշխիքների վարույթի շրջանակում: Հարցաքննությունը իրականացնում է քննիչը, սակայն այդ գործընթացը գտնվում է դատարանի դիտարկման ներքո: Նախագծի 315-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է օրենսգրքով սահմանված հարցաքննության ընթացակարգի պահպանումը, ինչպես նաև ցուցմունքի դեպոնացման ընթացքում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը: Դատական երաշխիքի կիրառման դեպքում սահմանափակվում է քննիչի հայեցողությունը հանելու դատավարական հակառակորդի հարցը, ինչպես նաև ոչ իրավաչափորեն սահմանափակելու հակընդդեմ հարցման իրավունքը:

Այսպիսով, համագործակցող մեղադրյալի նախաքննական ցուցմունքի դատական դեպոնացումը (այդ թվում՝ տեսակապի կիրառմամբ) հնարավորություն է ստեղծում նվազեցնել ցուցմունքի դեպոնացման ընթացքում համագործակցող մեղադրյալի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգները՝ միաժամանակ ապահովելով դատավարական հակառակորդի (հանցակցի) հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը:

¹ Տե՛ս Խաչատուրյան Գ. Համագործակցության վարույթ. Իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու. Եր.: ՀՀ իրավաբանների միություն, 2014. էջ 492:

² Зинченко И.А., Попов А.А. Структура уголовно-процессуального института депонирования показаний, цель и основания его применения. Библиотека криминалиста. Научный журнал. 2015. N 1 (18). С. 306.

³ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաշյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1969, էջ 112:

⁴ Տե՛ս ՀՀ քր. դատ. օր.-ի նախագիծն առաջին անգամ սահմանում է քննչական գործողությունների կատարման ժամանակ տեսակապի օգտագործման դատավարական կարգը. բացառիկ դեպքերում, եթե սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով քննչական գործողության կատարումն անհնար է, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսակապի միջոցով (Նախագծի 221-րդ հոդված):

⁵ Տե՛ս Виницкий Л.В., Кубрикова М.Е. Актуальные вопросы института досудебного соглашения о сотрудничестве. Юрлитинформ. 2015. С. 145.

Արտուր Գամբարյան

Заместитель председателя Следственного комитета РА,
доктор юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Судебное депонирование и оглашение показаний обвиняемого, сотрудничающего со следствием

В статье обсуждаются вопросы обеспечения безопасности лица, сотрудничающего со следствием и взаимосвязанные вопросы достоверности данных обвиняемым показаний против соучастников совершенного преступления. Автор утверждает, что судебное депонирование показаний обвиняемого, сотрудничающего со следствием, может стать эффективным механизмом, который создаст возможность для обеспечения как безопасности лица сотрудничающего со следствием, так и достоверности показаний обвиняемого, данных против соучастников преступления.

Ключевые слова: обвиняемый, сотрудничество, показания, судебное депонирование, безопасность.

Artur Ghambaryan

Deputy Chairman of RA investigative committee,
Doctor of Law, Associate Professor

SUMMARY

Judicial deposition and announcement of testimony of the accused cooperated with the investigation

The article discusses the issues concerning the security of a person who cooperates with the investigation and the related issues of reliability of testimony given by the accused against the accomplices of the crime. The author asserts that the judicial deposition of testimony of the accused who cooperates with the investigation can be an effective mechanism that will make possible to ensure both security of the person cooperating with the investigation, and the credibility of the accuser's testimony against accomplices.

Keywords: accused, cooperation, testimony, judicial deposition, security.